

ՀՏԴ 330.3Տնտեսագիտություն

Անյուտա ԳԱՄՊԱԲՅԱՆ

ԱրՊՀ, տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի ավագ դասախոս

Արտակ ՄԻՐԶՈՅԱՆ

Արցախի ներդրումային հիմնադրամի գլխավոր տնօրեն

Միկեր ՄԽԻԹԱԲՅԱՆ

Արցախի ներդրումային հիմնադրամի գլխավոր տնօրենի տեղակալ

**ՆԵՐՂՈՒՄԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Տնտեսական աճի և արտահանման բարձր տեմպերի ապահովումը կարևոր հիմնախնդիր է զարգացող ցանկացած երկրի համար: Այդ տեսանկյունից առավել կարևորվում է ներդրումային արդյունավետ քաղաքականության իրականացումը և դրան առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրությունը, որը դիտարկվում է սույն հոդվածում:

Հոդվածում ներկայացվում են ԱՀ տնտեսական զարգացման առանցքային և առաջնահերթ խնդիրներից մեկի՝ ներդրումների խթանման և աջակցման պայմանները: Հիմնավորվում է, որ ներդրումային քաղաքականության նպատակների իրացումը պահանջում է ոլորտի հիմնարար խնդիրների լուծում, առանց որի հնարավոր չէ ապահովել ներդրումների ծավալների աճը և երկրի տնտեսական զարգացումը:

Հիմք ընդունելով ներդրումների ներգրավման համար անհետաձգելի և մարտավարական խնդիրների շարքում առկա բացթողումների վերլուծությունը՝ առաջարկվում է որդեգրել տնտեսական իրական հաստատուն աճի ապահովման քաղաքականություն:

Բանալի բառեր՝ ներդրումներ, արդյունավետություն, տնտեսական զարգացում, ներդրումային քաղաքականություն, կայուն զարգացում, մարտահրավեր, տնտեսական բարեփոխումներ, ներդրումների մասնաբաժին:

А.Гаспарян, А.Мирзоян, М.Мхитарян

ПРОБЛЕМЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ИНВЕСТИЦИОННОЙ ПОЛИТИКИ В АРЦАХСКОЙ РЕСПУБЛИКЕ

Обеспечение высоких темпов экономического роста и экспорта является важной задачей для любой развивающейся страны. С этой точки зрения наиболее важным является осуществление эффективной инвестиционной политики и изучение связанных с ней вопросов, которые рассматриваются в этой статье.

В статье представлен один из ключевых и приоритетных вопросов экономического развития Республики Арцах - условий для продвижения и поддержки инвестиций. Утверждается, что реализация целей инвестиционной политики требует решения фундаментальных вопросов отрасли, без которых невозможно обеспечить рост инвестиций и экономическое развитие страны.

Основываясь на анализе существующих недостатков в срочных и тактических вопросах привлечения инвестиций, предлагается принять политику обеспечения устойчивого экономического роста.

***Ключевые слова:** инвестиции, эффективность, экономическое развитие, инвестиционная политика, устойчивое развитие, вызовы, экономические реформы, доля инвестиций.*

A.Gasparyan, A.Mirzoyan, M.Mkhitaryan

PROBLEMS OF IMPROVING THE INVESTMENT POLICY IN ARTSAKH REPUBLIC

Ensuring high rates of economic growth and exports is an important task for any developing country. From this point of view, the most important is the implementation of an effective investment policy and the study of related issues. These issues are considered in the article.

The article presents one of the key and priority issues of the economic development of the Artsakh Republic - conditions for promoting and supporting investments. It is stated that the implementation of investment policy objectives requires the solution of fundamental issues of the industry, without which it is impossible to ensure the growth of investment and the economic development of the country.

Based on the analysis of existing shortcomings in urgent and tactical issues of attracting investment, it is proposed to adopt a policy of ensuring sustainable economic growth.

***Keywords:** investments, efficiency, economic development, investment policy, sustainable development, challenges, economic reforms, the proportion of investments.*

Արդի պայմաններում ներդրումային քաղաքականությունը Արցախի Հանրապետության կառավարության տնտեսական քաղաքականության կարևորագույն տարրերից և ուղղություններից է: Այն նպատակաուղղված է երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը, ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավմանը և, վերջինիս հիման վրա, տնտեսական զարգացման ապահովմանը: Ներդրումային նպատակաուղղված քաղաքականության մշակմամբ և նրա արդյունավետ իրականացմամբ է մեծ չափով պայմանավորված երկրի արդյունաբերական և գիտատեխնիկական զարգացման հետագա ընթացքը:

Արցախի Հանրապետության ներդրումային քաղաքականությունը ձևավորվել և իրականացվում է ազատական սկզբունքների հիման վրա, որը ամրագրվել է օրենսդրության մեջ, մասնավորապես՝ Օտարերկրյա ներդրումների մասին ԱՀ օրենքում, 2008թ.-ին հաստատված ԱՀ ներդրումային քաղաքականությանն


Հայեցակարգում, ԱՀ Կառավարության գործունեության ծրագրում և տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի ներդրումներին վերաբերող այլ դրույթներում:

ԱՀ ներդրումային քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

- ներդրումները կարգավորող օրենսդրության կայունության ապահովումը,
- օտարերկրյա և տեղական ներդրողների համար տնտեսավարման հավասար, ոչ խտրական պայմանների ապահովումը,
- ներդրողների համար արտոնյալ պայմանների սահմանումը,
- ներդրումային ոլորտում տնտեսավարման ազատական սկզբունքների կիրառումը,
- ներդրումների և ներդրողների շահերի պաշտպանության ապահովումը,
- ներդրումները կարգավորող միջազգային իրավական նորմերի և միջազգային ընդունված պրակտիկայի ընդունումը և կիրառումը:

Արցախի Հանրապետության ներդրումային քաղաքականության հիմնական նպատակն է տնտեսական ակտիվության բարձրացման միջոցով տնտեսական կայուն աճի և բնակչության կենսամակարդակի բարձրացման և շրջակա միջավայրի պահպանության ապահովումը:

Տնտեսական աճը ցանկացած երկրի զարգացման կարևոր գործոն է, սակայն այն ինքնանապատակ չէ: Կարելի է նյութական բարիքների արտադրության աճ գրանցել, սակայն, ի հաշիվ որակի վատթարացման, ռեսուրսների անսահմանափակ օգտագործման և այլն: Տնտեսական աճն իմաստ ունի միայն այն դեպքում, երբ ապահովում է առավելագույն զբաղվածություն, կենցաղային պայմանների եւ պահանջմունքների առավել լիարժեք բավարարում, ապագայի նկատմամբ վստահության բարձրացում, ինչպես նաև սոցիալական կայունություն: Այնուհանդերձ, ինչպես վկայում է արևմտյան երկրների փորձը, տնտեսության կայուն աճ ապահովելու համար ներդրումները պետք է կազմեն ՀՆԱ-ի 20-25%-ը:



Գծապատկեր 1

Կատարելով վերլուծություն, կազմելով վերջի տարիների ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ կտեսնենք, որ ՀՆԱ կազմում ներդրումների մասնաբաժինը տատանվում է 20-35% սահմաններում, որը փաստում է այն մասին, որ ներկա որդեգրած ներդրումային քաղաքականությունը ապահովում է և կարող է ապահովել տնտեսության կայուն աճ:

Տնտեսական աճի համար անհրաժեշտ պայմանների ապահովման նպատակով ԱՀ-ում սկսվել է տնտեսության հիմնական ճյուղերի վերակառուցում, ինչպես նաև ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ հիմնական կապիտալի նորացման նպատակով: Արդեն շուրջ 10 տարի է, ինչ հանրապետության կառավարության

ընդունած նորմատիվային ակտերի հիման վրա խրախուսվում է տեղական հումքի վրա աշխատող գյուղատնտեսական շահութաբեր արտադրությունների արտոնյալ վարկավորումը: Հարկազանման ոլորտում արմատական բնույթի փոփոխությունները հանգեցրին հարկային քաղաքականության առավել ճկուն համակարգի, որն էլ իր հերթին նպաստավոր պայմաններ ստեղծեց ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրողների համար: Այսպես, մասնավոր օտարերկրյա ներդրողների կողմից ԱՀ-ում մասնավորեցված ձեռնարկությունների և կազմակերպությունների տնտեսավարման պրակտիկան վկայում է, որ ժամանակակից պայմաններում օտարերկրյա կապիտալն ի վիճակի է հանգեցնել գիտատեխնիկական առաջընթացի վերջին նվաճումների և կառավարչական առաջավոր փորձի ներդրմանն ու լայն տարածմանը հանրապետությունում: Օտարերկրյա ուղղակի և անուղղակի մի շարք ներդրումների շնորհիվ վերականգնվել և բացվել են ու այսօր հաջողությամբ գործում են մի շարք ձեռնարկություններ:

Առանձնապես պետք է նշել այն հանգամանքը, որ պետական կառավարման բոլոր մակարդակներում իրականացվում է գործարարությանն ու ձեռներեցությանն աջակցման և օժանդակման քաղաքականություն:

Ներկայում շարունակվում է ներդրումների ակտիվ գործընթացը, հատկապես գյուղատնտեսության և գյուղատնտեսական մթերքի մշակման, այգեգործության, մասնավորապես՝ խաղողագործության, զինեգործության, անասնաբուծության, մսի, կաթնամթերքի արտադրության, տեղական պտուղ-բանջարեղենի հումքային պաշարների վերամշակման, արևածաղկի ու եգիպտացորենի յուղի, մակարոնեղենի և հրուշակեղենի արտադրության, ոսկերչության, շինարարական նյութերի, մասնավորապես՝ տեղական քարերի արդյունահանման ու վերամշակման, էլեկտրաէներգիայի արտադրության և այլ բնագավառներում: Արտահանման խթանումը ներկայումս պետության կարևորագույն հիմնախնդիրն է:

1998-ից ի վեր տնտեսական ան է արձանագրվել ԱՀ տնտեսության տարբեր ոլորտներում: Վերջին 5 տարիների ընթացքում արձանագրվել է միջինում 9 տոկոս տնտեսական աճ:

Ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա կարելի է կատարել մի շարք հետևություններ Արցախի Հանրապետությունում իրականացվող տնտեսական բարեփոխումների արդյունքում ներդրումային միջավայրի՝ գործարարության զարգացման, փոքր և միջին ձեռներեցության բարելավման, հարկային քաղաքականության դերի ու նշանակության, հարկային ռազմավարության արդի գերակայությունների և խնդիրների վերաբերյալ.

- ԱՀ պետական կառավարման բոլոր մակարդակներում իրականացվում է գործարարությանն ու ձեռներեցությանն աջակցման և օժանդակման քաղաքականություն: Ներկայումս շարունակվում է ներդրումների ակտիվ գործընթացը, հատկապես՝ խաղողագործության և տեղական զինեգործության, անասնաբուծության, մսի, մեղվաբուծության, կաթնամթերքի արտադրության, գյուղատնտեսական մթերքի վերամշակման, լեռնահանքարդյունահանման, կապի, էներգետիկայի և այլ բնագավառներում:

- Տնտեսական աճի համար անհրաժեշտ պայմանների ապահովման նպատակով ԱՀ-ում սկսվել է տնտեսության հիմնական ճյուղերի վերակառուցում, ինչպես նաև ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ հիմնական կապիտալի նորացման նպատակով: Գյուղատնտեսության բնագավառում հաջողությամբ անցկացված բարեփոխումները դարձան ԱՀ տնտեսության այլ ճյուղերում նմանատիպ բարեփոխումների իրականացման գրավական:

- ԱՀ տնտեսական համակարգի կայունացման, նորացման և զարգացման գործոններն անմիջականորեն կապված են փոքր բիզնեսի բնագավառում ռազմավարական կառավարչական կարևորագույն որոշումների հետ: Հանրապետության տնտեսական զարգացման աղբյուրներից մեկը պետք է դառնա փոքր գործարարության գործոնը: Լավ զարգացած և փոքր ձեռնարկատիրության վրա հիմնված շուկայական ենթակառուցվածքը թույլ կտա հավասարակշռել հակասությունները պետական կառավարման և շուկայի ինքնազարգացման միջև՝ ճկունության ու բազմազանության աճի հաշվին ապահովելով առավել հարմարվող, կայուն, կանխորոշելի և կառավարելի

շուկայական միջավայր: Հենց այս գործոններով են պայմանավորված փոքր գործարարության ոլորտի պետական կարգավորման ձգտումը և այդ ոլորտի հովանավորությունը:

- Ուեստրսների օգտագործման սահմանափակության և առաջնային պահանջմունքների ոչ լրիվ բավարարման պայմաններում անցումային շրջանում գտնվող պետության բարեփոխումների իրականացման արդյունավետությունը մեծապես կախված է օտարերկրյա ներդրումներից, արտաքին տնտեսական կապերի զարգացման մակարդակից: Ուստի՝ կարծում ենք, որ ԱՀ հարկային համակարգը պետք է կարգավորի ներպետական տնտեսական այն պայմանները, որոնք օժանդակում են օտարերկրյա կապիտալի հոսքին՝ արտասահմանյան կապիտալի մասնակցությամբ արտադրական ձեռնարկությունների համար տարբեր հարկատեսակների գծով արտոնությունների սահմանման (կախված ամբողջ կապիտալի նկատմամբ օտարերկրյա կապիտալի կշռից) և այլ գործիքների միջոցով: Միաժամանակ հարկ է նշել, որ անցումային ժամանակաշրջանն ապրող ԱՀ հարկային համակարգը նպատակահարմար չէ ծանրաբեռնել արտոնությունների բազմաթիվ տեսակներով, որը կարող է ոչ այնքան նպաստավոր, որքան խառնաշփոթ հարուցող գործոն դառնալ: Ուստի՝ ԱՀ առաջնային քայլերից մեկը պետք է լինի օտարերկրյա կապիտալի գործունեության օրենսդրաիրավական կատարյալ բազայի ստեղծումը: Օտարերկրյա ուղղակի ներդրումների աճը ԱՀ-ում մեծապես պայմանավորված է տարածաշրջանում և երկրի ներսում խաղաղության ու կայունության ապահովման հեռանկարով: Սակայն այս հարցում պակաս կարևոր նշանակություն չունի նաև երկրի օրենսդրական դաշտի, ներդրումային համապատասխան ենթակառույցների դերը: Ներդրումային ենթակառույցների ձևավորման և գործունեության ներկա վիճակը դեռևս չի կարելի բավարար համարել: ԱՀ գործարարության զարգացման ոլորտում առ այսօր առկա են մի շարք բացահայտ թերություններ: Արտադրական միջոցների վերականգնման, արտադրության և ծառայությունների վերազինման, գործարարության ոլորտի ըստ ամենայնի խթանման և նոր ձեռնարկություններ ստեղծելու խնդիրն առավել ևս բարդանում է ինչպես հանրապետությունում, այնպես էլ տարածաշրջանում տիրող բարոյահոգեբանական, հատկապես՝ քաղաքական մթնոլորտով, պատերազմական ձգձգվող իրավիճակով, որն ինչ-որ տեղ արտահայտվում է ձեռնարկատիրական նոր նախաձեռնումների նկատմամբ հասարակական ոգևորության ու եռանդի թերզարգացմամբ և նույնիսկ բացակայությամբ: Սույն հիմնախնդիրը, անբարենպաստ այլ գործոնների ազդեցությունից բացի, խորանում է նաև օրենսդրական դաշտի անկատարության, եղած օրենքներում և դրանց կիռարման մեխանիզմներում հանդիպող թերությունների պատճառով: Ներդրումների նկատմամբ վարվող քաղաքականության օրենսդրորեն ամրագրման, ներդրումային միջավայրի բարելավման և ներդրումների խթանման նպատակով պետք է իրականացվեն կազմակերպական բնույթի մի շարք միջոցառումներ, որոնցից են.

- Երկրի տնտեսության տարածքային անհավասարակշիռ զարգացումից խուսափելու համար հարկավոր է իրականացնել համալիր միջոցառումներ՝ երկրի շրջաններում ներդրումների խրախուսման նպատակով:

- Հաշվի առնելով օտարերկրյա ուղղակի ներդրումների ժամանակակից միտումները՝ գիտատար ճյուղերում ներդրումների կշռի առաջընթաց մեծացումը, անհրաժեշտ է էապես փոփոխել երկրի մրցակցային առավելությունների կառուցվածքը, որում աստիճանաբար պետք է նվազեն բնական ռեսուրսների, էժան աշխատուժի առկայության դերը, միաժամանակ որոշիչ դառնան ստեղծված ակտիվները, ինչպես նաև բարձրորակ մասնագետները, ենթակառույցների զարգացվածությունը,

- Անհրաժեշտ է ակտիվացնել և ավելի ուղղորդված դարձնել Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի հետ համագործակցությունը՝ ձևավորելով վստահելի ու փոխշահավետ միջավայր:


- Պետք է ամրագրել պետության վերաբերմունքը ներդրումների համար գերակա համարվող ոլորտների զարգացմանը և այնտեղ կատարված ներդրումներին:

- Պետք է ընդլայնել արտասահմանյան երկրների միջև գործարար և ֆինանսական տեղեկատվության մատչելիությունն ու փոխանակումը:

• Ներդրումային քաղաքականության նպատակների իրականացումը ենթադրում է ոլորտի հիմնարար խնդիրների լուծում, առանց որի հնարավոր չէ իրականացնել ներդրումային արդյունավետ քաղաքականություն, ապահովել ներդրումների ծավալների աճ և երկրի տնտեսության կայուն զարգացում:

Իրական ակտիվներում իրականացված ընդհանուր ներդրումները, այդ թվում օտարերկրյա 2013-2017թթ. ընթացքում տատանվել է 70-55 մլրդ դրամի սահմաններում: Ընդ որում 2014թ. 2013 թվականի նկատմամբ կտրուկ աճ է արձանագրվել ինչպես օտարերկրյա, այնպես էլ ընդհանուր ներդրումների գծով, ինչը մեծ մասամբ պայմանավորված էր արդյունաբերության ոլորտում ներդրումների ծավալի ավելացման հետ, սակայն 2016թ. ներդրումների ծավալների անկում է արձանագրվել, ինչը կարելի է ասել հիմնականում պայմանավորված է ապրիլյան պատերազմով:

Վերջին հինգ տարիներին իրական ակտիվներում իրականացված ամենամեծ ներդրումների ծավալը արձանագրվել է 2014թ.: Կառուցվածքն ըստ ճյուղերի ուներ հետևյալ տեսքը, որում մեծ տեսակարար կշիռ ունեն արդյունաբերությունը և շինարարությունը:




Գծապատկեր 2

ԱՀ-ում 1995 թվականից իրականացվում են տնտեսական բարեփոխումներ, որոնք սկզբնական շրջանում ուղղորդվում էին խորհրդարանի հաստատած հիմնադրույթներով: Բնականաբար կարևորում էին պետական ֆինանսների և մասնավորապես հարկային քաղաքականության ոլորտները, քանի որ հույժ անհրաժեշտություն էր առաջացել հստակեցնելու այն ուղղությունները, որոնցով պետք էր ընթանար հարկադրման ողջ գործընթացը, հատկապես ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցության, պետական բյուջեում սեփական եկամուտների ավելացման, հարկային բեռի բաշխվածության, նոր հարկատեսակների ներդրման, հարկային բազայի ընդլայնման, հարկերի հավաքագրման մեխանիզմների և հարկային վարչարարության կատարելագործման ու օրենսդրական կարգավորման հիմնախնդիրների նախաձեռնման առումով: Կարելի է ասել, որ արդեն այդ տարիներին սահմանվել էր գոյություն ունեցող հարկային համակարգի հետագա զարգացման նպատակ:

Նշենք, որ մինչ այդ, դեռևս 1992թ. անկախության հռչակումից հետո ԱՀ-ում, չնայած ընթացող պատերազմական ակտիվ գործողություններին, ձևավորվել էր ինքնուրույն հարկման պրակտիկա, այսինքն՝ օրենսդրորեն սահմանվել և գործում էին շահութահարկը, ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը, եկամտահարկը և մի շարք վճարներ ու տուրքեր: Դրա հիմք էր ծառայում ԱՀ գերագույն խորհրդի 1992թ. հունվարի 6-ի որոշումը, որի համաձայն՝ ԱՀ տարածքում գործողության մեջ դրվեցին այլ

պետությունների գործող օրենսդրական ակտերը: Այդ իրավական հիմքի վրա ԱՀ-ում սկսեցին գործել ՀՀ-ում մտցված վերոհիշյալ հարկատեսակները, և հստակեցվեցին հարկային համակարգի կառուցվածքի, հարկման օբյեկտների ու վճառողների շրջանակները, հարկերի ու տուրքերի վճարման նկատմամբ հսկողության, վերահսկողության իրականացման հարցերը: Չէին կիրառվում գույքահարկը և հողի հարկը, որոնք գործողության մեջ դրվեցին միայն 1995թ. ԱՀ Կառավարության ընդունած օրենքի ուժ ունեցող համապատասխան որոշումներով, քանի որ ԱՀ Գերագույն խորհուրդը տնտեսական բարեփոխումների գործընթացն ապահովելու համար Կառավարությանը իրավունք էր վերապահել մինչև խորհրդարանի կողմից համապատասխան օրենքների ընդունումը առանձին հարցեր ժամանակավորապես կարգավորել Կառավարության որոշումներով:

Ներկայումս ԱՀ հարկային օրենսդրությամբ սահմանվում են հետևյալ հարկատեսակները և պարտադիր վճարները.



Առանձին դեպքերում սահմանվում են ավելացված արժեքի հարկին և շահութահարկին կամ ավելացված արժեքի հարկին ու եկամտահարկին փոխարինող՝

- հաստատագրված վճարներ
- և առևտրի հարկ:

Օտարերկրյա ներդրումներով ընկերությունները տեղական ընկերությունների նման ենթարկվում են նույն հարկային ռեժիմին:

ԱՀ սահմանը չի հանդիսանում մաքսային սահման, մաքսային գործարքները ձևակերպվում են ՀՀ մաքսային սահմանում և կարգավորվում են ՀՀ մաքսային օրենսդրությամբ:

ԱՀ-ում տնտեսական բարեփոխումների համալիր ծրագրերում առաջնային ուղղություններից մեկը մնում է օտարերկրյա ներդրումների ներգրավումը: Աշխարհի մյուս երկրների նման Դարաբաղը օտարերկրյա ներդրումները դիտարկում է որպես տեխնիկական և տնտեսական աճի արագացման հիմնական գործոն, արտադրության նորացում ու արդիականացում, համաշխարհային տնտեսությանը ինտեգրման ուժեղացում ապահովող միջոց: Ստեղծված տնտեսական իրավիճակում, երբ ներքին աղբյուրների հաշվին ներդրումներն անբավարար են, իսկ արտասահմանյան

ֆինանսավորման աղբյուրներին դիմելը (միջազգային կազմակերպություններ, զարգացման ֆոնդեր), ԱՀ-ն միջազգայնորեն չճանաչված լինելու պատճառով անհնար, արտասահմանյան մասնավոր կապիտալի ներգրավումը դառնում է ԱՀ-ի տնտեսական զարգացման հիմնական գրավականը:

Ներդրումների ծավալների ավելացումը խթանելու նպատակով ԱՀ հարկային օրենսդրությամբ սահմանված են որոշակի արտոնություններ, մասնավորապես.

«Շահութահարկի մասին» ԱՀ օրենքով .

- Եթե ռեզիդենտի (բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների գրավատների, ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց, գրավատների, արտարժույթի առք ու վաճառքի և արտարժույթի դիլերային-բրոքերային առք ու վաճառքի, մետաղական օգտակար հանածոների և մետաղի խտանյութի արտադրության, վառելիքաէներգետիկ հումքի արդյունահանման և արտադրության գործունեություն իրականացնող անձինք, հեռահաղորդակցության բնագավառում լիցենզավորված գործունեություն իրականացնողի, ներդրումային ընկերությունների) պետական գրանցման պահին ու դրան հաջորդող երեք տարիների ընթացքում կանոնադրական կապիտալում հիմնադրի (մասնակցի) փաստացի կատարած ներդրման ընդհանուր արժեքը կազմում է առնվազն 100 մլն դրամ, ապա տվյալ ռեզիդենտի շահութահարկի գումարը նվազեցվում է՝ ներդրման պահին հաջորդող առաջին երեք տարիներին 100 տոկոսի չափով, հետագա երկու տարիներին՝ 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան ներդրման ընդհանուր արժեքի 10 տոկոսը:

- Շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուները՝ իրենց կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված եւ այլ եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում 10 տոկոսը:

«Շահութահարկի մասին», «Եկամտային հարկի մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» ԱՀ օրենքներով նշված հարկատեսակներից ազատվում են.

- ԱՀ-ում գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուները՝ իրենց կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի մասով.

- Անմիջական արտադրողի կողմից ԱՀ-ում արտադրված ձեռագործ գորգերի իրացումը.

- ԱՀ տարածքում կառուցվող բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) կամ ստորաբաժանված շենքի բնակարանների օտարումը մինչև 2013 թվականի հունվարի 1-ը:

- 2015 թվականից մեկնարկել է նոր՝ ԱՀ-ի գումարների փոխհատուցման ծրագիրը, համաձայն որի՝ ԱՀ-ում գյուղատնտեսական մթերքներ վերամշակող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին այդ արտադրանքի իրացումից ԱՀ պետական բյուջե վճարած ԱՀ-ի գումարները փոխհատուցվում են:

Ֆիզիկական անձանց, այդ թվում՝ օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից ստացված շահաբաժինները հարկման ենթակա չեն:

Այսօրվա իրողությունների հրամայականն է տնտեսական զարգացման և մասնավորապես հարկային քաղաքականության ծրագրերի մշակման, քննարկման և ընդունման անհրաժեշտությունը ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԱՀ-ում երկարատև ժամանակաշրջանի՝ 5-10 տարվա համար: Ընդ որում, երկու հանրապետությունների ընդհանուր տնտեսական տարածքի և միատեսակ հարկատեսակների կիրառման պայմաններում, ելնելով հարկային դաշտերի մերձեցման անհրաժեշտությունից ու ԱՀ տնտեսական առաջանցիկ զարգացման հանգամանքից, դրանք պետք է ունենան ներքին տրամաբանական կապ, իսկ ԱՀ-ի համար պետք է հաշվի առնվի բնակչության թվի կտրուկ աճի ապահովման, վերաբնակեցման, ենթակառուցվածքների զարգացման ու աշխատատեղերի ստեղծման անհետաձգելի խնդիրների լուծման հրատապությունը:

Ընդհանրացնելով վերը նշվածը կարելի է նշել, որ ԱՀ-ում հարկային բարեփոխումների իրականացման համար պետք է կարևորել հետևյալ մոտեցումները.

- ԱՀ հարկային ներուժի իրական չափի որոշում՝ տնտեսական ոլորտների միջև հարկային բեռի տեղափոխման իմաստով,
- հարկային վարչարարության նպատակը պետք է հանդիսանա առաջին հերթին հարկային պարտավորությունների նկատմամբ համալիր մոնիտորինգի և վերահսկողության ապահովումը, որը միտված կլինի նպաստելու պետության և գործարար հատվածի միջև թափանցիկ ու փոխադարձ վստահելի հարաբերությունների հաստատմանը,
- հարկային համակարգի վերափոխման ընթացքում անհրաժեշտ է ապահովել կիրառվող մեխանիզմների որոշակի կայունություն: Այդ բարեփոխումները, դրանցից բխող հարկային մեխանիզմների փոփոխությունները պետք է հաշվի առնեն համակարգի համապատասխան մասնագետների ժամանակին ու ներդաշնակ վերապատրաստման և տնտեսավարող սուբյեկտների կողմից այդ փոփոխությունների բավարար յուրացման խնդիրները:
- պարզեցնել և միասնականացնել հարկային մարմիններ ներկայացվող հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման կարգերը (հրահանգները) հարկային մարմիններ, որը կհանգեցնի ներկայացվող հաշվետվությունների քանակների էական կրճատման և պարզեցման:

Բարեփոխումների նպատակը ԱՀ-ում եղել և մնում է տնտեսական աճի ապահովումը, տնտեսական համալիրի ստեղծումը, որը պետք է դառնա պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը: Հարկային ներկա ճկուն քաղաքականությունը շատ արտոնություններ է պարունակում ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ներդրողների համար: Վարկային քաղաքականությունը իրականացնում է ՀՀ բանկային համակարգը, որը ներառում է ժամանակակից տեխնիկական միջոցներով և հնարավորություններով զինված մասնագիտացած մի շարք կոմերցիոն բանկեր, որոնք օժանդակում են տնտեսությունների հետ բանկերի կապերի ուժեղացմանը, արտադրության վրա դրամավարկային հարաբերությունների ազդեցությանը, վարկային ներդրումների կառուցվածքի բարելավմանը:

ԱՀ Կառավարության ներդրումային գործունեության ռազմավարական ուղղություններից մեկը տնտեսության զարգացումն ու ամրապնդումն է, դրա հիման վրա էլ՝ բնակչության կենսամակարդակի բարձրացումը: Լինելով դեռևս չճանաչված պետություն՝ Արցախի Հանրապետությունը զրկված է միջազգային ֆինանսական կազմակերպություններից ուղղակի կամ անուղղակի ներդրումներ ստանալու հնարավորությունից: Ուստի, տնտեսական և սոցիալական հիմնահարցերը լուծելու համար ԱՀ-ն պետք է գլխավոր շեշտը դնի սեփական միջոցների, Հայաստանի վարկերի վրա, ինչպես նաև հենվի հայկական սփյուռքի և արտասահմանյան բարեգործողների գորակցության վրա:

Արտաքին ուղղակի և անուղղակի ներդրումների առյուծի բաժինը պատկանում է գինեգործությանը, կաթի և կաթնամթերքների, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակմանը, ինչպես նաև լեռնարդյունահանող ճյուղին և գորգագործությանը:

ԱՀ ներդրումային քաղաքականության իրականացման առնչությամբ ցանկանում ենք առանձնակիորեն կանգ առնել ապահովագրության հիմնախնդրի վրա:

Ապահովագրումը որոշակի իրադարձությունների պարագայում տնտեսավարման սուբյեկտների ու քաղաքացիների գույքային և ոչ գույքային շահերի պահպանման կազմակերպումն է՝ նրանց կողմից այդ նպատակով մուծված դրամական միջոցներից գոյացած ֆինանսական ռեսուրսների հաշվին:

Ապահովագրման օբյեկտ կարող են լինել գույքային և ոչ գույքային բոլոր այն շահերը, որոնք չեն հակասում գործող օրենսդրությանը:

Ապահովագրումը, որպես ռիսկի կրճատման և գործավարության ձև, պայմանավորված է ապահովագրական շահերով: Շուկայական հարաբերություններին անցման ներկա պայմաններում ապահովագրության դերը որոշվում է երկու հիմնական գործոնով: Մի կողմից՝ ապահովագրությունը հնարավորություն է ընձեռում իրականացնել ռիսկերի վերաբաշխում և վնասների փոխհատուցում: Իսկ մյուս կողմից էլ ապահովագրական ռիսկի կառավարման նպատակով անհրաժեշտություն է առաջանում ձևավորել ապահովագրական պահուստներ, որոնց մեծությունը, որպես կանոն, պետք է համապատասխանի ապահովագրության պայմանագրերով սահմանված

պարտավորությունների չափին: Ապահովագրողի ստեղծած ապահովագրական պահուստներն ունեն փոխատվական բնույթ, և ապահովագրվողից պահանջվում է խելամիտ ու մտածված ներդրումային քաղաքականության իրականացում, այսինքն՝ ներդրումների իրականացման կոնկրետ ուղղությունների ճիշտ ընտրություն՝ ներդրումների փոխհատուցման ժամկետների հնարավոր կրճատման նպատակով:

ԱՀ-ում ներկայումս ներդրումային քաղաքականության գերակա ճյուղերից է զբոսաշրջությունը: ԱՀ-ն՝ որպես զբոսաշրջության համար գրավիչ, պատմամշակութային և բնական ռեսուրսներով հարուստ երկիր, մեծ ներուժ ունի միջազգային զբոսաշրջության շուկային առաջարկելու բազմաբնույթ, մրցունակ զբոսաշրջային արդյունք, որի համար անհրաժեշտ է որակավորված աշխատուժ, ներդրումներ, բարձրակարգ ենթակառուցվածքներ և ծառայություններ, հետազոտությունների ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ, ինչպես նաև բարենպաստ գործարար միջավայր:

Զբոսաշրջության բնագավառի կայուն զարգացումը պահանջում է բոլոր շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության ակտիվ և արդյունավետ համագործակցություն: Միևնույն ժամանակ, զբոսաշրջության կայուն զարգացման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ ոլորտը զարգանում է հիմնական զբոսաշրջային ռեսուրսների հիման վրա (բնական, պատմամշակութային, մարդկային)՝ առանց որոնց պահպանության և վերարտադրության զբոսաշրջության զարգացումն ապահովել հնարավոր չէ:

Վերջին տարիներին ԱՀ կառավարության կողմից զբոսաշրջության ոլորտում իրականացված միջոցառումները հիմնականում ուղղված են եղել այդ բնագավառի օրենսդրական դաշտի ձևավորմանը, ինչպես նաև ՀՀ-ում և արտերկրում ԱՀ զբոսաշրջային ներուժի ներկայացմանը: Իրականացված արդյունավետ քաղաքականության և կատարված մեծածավալ ներդրումների շնորհիվ վերջին 10 տարիների ընթացքում Արցախում մեկ օրվա մեջ հաշվառված հյուրանոցների օրական տարողունակությունը հասցվել է գրեթե 1500-ի, զբոսաշրջային օպերատորների թիվը հասել է 9-ի, տարեկան այցելող զբոսաշրջիկների քանակը քառապատկվել է, ընդ որում 2017 թվականին արձանագրվել է 66 տոկոս աճ՝ 2016 թվականի համեմատ: Արցախ ժամանող տուրիստների աշխարհագրությունը լայն է ավելի քան 80 երկրներից՝ ԵՄ երկրներ, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, ՌԴ, ԱՊՀ երկրներ, Իրան, Սիրիա, Լիբանան, Կանադա, և այլ:

ԱՀ զբոսաշրջային ներուժը գնահատելիս անպայման պետք է հաշվի առնել այն փաստը, որ Արցախի Հանրապետության միջազգային զբոսաշրջության շուկայում նոր երկիր է, ինչը նրան շատ գրավիչ է դարձնում միջազգային զբոսաշրջության հանրության համար: Ունենալով այս զգալի ներուժը և զարգացման հնարավորություն ընձեռող զբոսաշրջության բազմազան տարատեսակներ՝ միաժամանակ առկա են զբոսաշրջությանը խոչընդոտող մի շարք և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ գործոններ: Արցախը լավագույն ձևով չի ներկայացված միջազգային հանրությանը, չի ձևավորված «Արցախը զբոսաշրջության համար բարենպաստ, գրավիչ և ապահով երկիր» նկարագիրը, չնայած այն բանին, որ այսպիսի պահանջարկ արդեն ձևավորված է: Քաղաքական և տնտեսական ցնցումները, ԱՀ մասնակի շրջափակումը և միջազգային ճանաչման բացակայությունը նույնպես բացասաբար են անդրադառնում տուրիզմի բնագավառի վրա:

Գրականություն

1. www.aif.am
2. www.tax.nk.am
3. www.taxservice.am
4. www.stat-nkr.am

Հոդվածը տպագրության է նրաշխարհել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., դոցենտ Շ.Շ. Ասրյանը: